

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ  
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ �ԱԺՆԻ  
ՓՈՐՁԱԳԵՏ ԱԼԵՔՍԵՅ ՍԱՍՈՒՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ  
12-ԻՑ ՄԻՆՁև 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ը ԸՆԿԱԾ  
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես, Ալեքսեյ Սասունի Ավետիսյանս, աշխատելով որպես ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) գրանցման և հաշվառման բաժնի փորձագետ, 2024 թվականի ապրիլի 12-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ կատարել եմ հետևյալ աշխատանքները, մասնավորապես՝

ա. Մասնակցել եմ Գործակալությունում իրավաբանական անձանց կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերի հետ առնչվող կայացված թվով 5 վարչական նախագծերի կազմման աշխատանքների իրականացմանը,

բ. Իրականացրել եմ իրավաբանական անձանց կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերի ներկայացմանն առնչվող անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում,

գ. Մասնակցել եմ քաղաքացիներին հասցեագրվող պատասխան գրությունների նախագծերի կազմման աշխատանքներին,

դ. Մասնակցել եմ իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգի արդիականացման հետ կապված տեխնիկական խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքներին՝ խնդրի ի հայտ գալու դեպքում կապի մեջ լինելով «Վի Իքս Սոֆթ» ընկերության մասնագետների հետ,

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԱԼԵՔՍԵՅ ԱՎԵՏԻՍՅԱՆ

30.12.2024թ.